ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է***

հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 16-ի № 1 հերթական նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2016 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի N63-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2016 թվականի նոյեմբերի 28-ի N70 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Համայնքային սեփականություն համարվող գույքն աճուրդային կարգով օտարելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի «Զովունի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենին աշխատանքից ազատելու և նոր տնօրենի թեկնածությանը համաձայնություն տալու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բնակիչ Արման Արմենակի Ստեփանյանի դիմումի քննարկման մասին:
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի վարչական տարածքում թիվ 0026-0020 և թիվ 0026-0044 ծածկագրերի տակ գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բնակիչ Նորիկ Մկրտչյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքապետարանում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին:

10. Բնական և տեխնածին աղետների հետևանքով համայնքի բնակիչներին պատճառված վնասների չափերն ուսումնասիրող և արձանագրող հանձնաժողով կազմավորելու մասին:
11. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ուսանողներին անհատույց տեղափոխող տրանսպորտային միջոց տրամադրելու մասին:
12. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի գլխավոր հատակագծով նախատեսվող ստադիոնի և հարակից տարածքում հարթեցման նպատակով հողալցում կատարելու մասին:
13. Համայնքի վարչական տարածքում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման և ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ կետի պահանջներով՝
համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Ի գիտություն ընդունել 2016 թվականի չորրորդ եռամսյակի համայնքի բյուջեի կատարումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N63-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18)-րդ, 19)-րդ կետերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներով ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի հունվարի 12-ի N01/10/95-17 գրությունը՝
համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017 թվականի համար տեղական տուրքերը և վճարները սահմանել հետևյալ դրույքաչափերով՝ համաձայն հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին» N63-Ն որոշումը:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի №3-Ն ՈՐՈՇՄԱՆ
Կ. Տ.

Տեղական տուրքերի դրույքաչափեր

1. Հայաստանի Հանրապետության Զովունի համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝30000 (երեսուն հազար) դրամ.

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 37500 (երեսուն յոթ հազար հինգ հարյուր) դրամ.

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 (երեք հազար) դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 (հինգ հազար) դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 (երեք հազար) դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ չի սահմանվում:

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 30000 (երեսուն հազար) դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ չի սահմանվում:

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 (հազար) դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 (երկու հազար) դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 (երեք հազար) դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 (չորս հազար) դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 (հինգ հազար) դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 (վեց հազար) դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 (հազար հինգ հարյուր) դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 (երկու հազար) դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 (երեք հազար) դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 (չորս հազար) դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 (հինգ հազար) դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 (վեց հազար) դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 (քսան հինգ հազար) դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ.

դ. խաղատների համար՝ 800000 (ութ հարյուր հազար) դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 350000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ.

12) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 (վեց հազար) դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 (տասնմեկ հազար) դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 (տասնվեց հազար) դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31000 (երեսուն մեկ հազար) դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 (հազար) դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 (հազար հինգ հարյուր) դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 (տաս հազար) դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 (տասնվեց հազար) դրամ.

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար. օրացուցային տարվա համար՝ չի սահմանվում:

14) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 (երկու հազար) դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո) դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (հազար հինգ հարյուր) դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 (տաս հազար) դրամ.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ:

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2000000 (երկու միլիոն) դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 (հինգ միլիոն) դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 (յոթ միլիոն) դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 (տաս միլիոն) դրամ:

Տեղական վճարների դրույքաչափեր

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10000 հազար դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10000 (տաս հազար) դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10000 (տաս հազար) դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փսատաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10000 (տաս հազար) դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 (հինգ հազար) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 (հինգ հազար) դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում յուրաքանչյուր բնակչի հաշվով 100 (հարյուր) դրամ

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում յուրաքանչյուր 1 տոնայի 1խմ հաշվով 500 (հինգ հարյուր) դրամ

9) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար...չի սահմանվում:

10) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես՝ ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ... չի սահմանվում:

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում... չի սահմանվում:

12) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար... չափով չի սահմանվում:

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով վճար՝ յուրաքանչյուր երեխայի համար 7000 (յոթ հազար) դրամ:

14) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական դպրոցի) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ յուրաքանչյուր երեխայի (աշակերտի) հաշվով՝

ա) դաշնամուրի դասարանի համար 5000 (հինգ հազար) դրամ

բ) այլ դասարանների համար 3000 (երեք հազար) դրամ

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար չի սահմանվում:

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար չի սահմանվում:

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում...չի սահմանվում:

18) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար 1000 (հազար) դրամ փոխհատուցման վճար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N70 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝
համայնքի ավագանին ***որոշում է.***

Հատված 1-ի՝ Համայնքի բյուջեի եկամուտները
Գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար
«12800.0» թիվը փոխարինել «14100.0» թվով
Գույքահարկ փոխադրամիջոցներից
«18500.0» թիվը փոխարինել«19700.0» թվով
Տեղական տուրք
«2000.0» թիվը փոխարինել «2520.0» թվով
Տեղական վճարներ
«0.0» թիվը փոխարինել «3000.0» թվով

1. Հատված 2-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման
1.1.1 Օրենսդիր և գործադիր մարմիններ
«54090.0» թիվը փոխարինել «56090.0»
5.1.1 Աղբահանում
«4146.0» թիվը փոխարինել «7166.0»
11.1.2 Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ
«4244.0» թիվը փոխարինել «5244.0» թվով

2. Հատված 3-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ՝

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ

4111 հոդվածի «40000.0» թիվը փոխարինել «41000.0» թվով

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ

4239 հոսդվածի «8046.0» թիվը փոխարինել «11566.0» թվով

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում

4251 հոդվածի թիվը «2500.0» թիվը փոխարինել «3000.0» թվով

պահուստային միջոցներ

4891 հոդվածի «4244.0» թիվը փոխարինել «5144.0» թվով

3. Հատված 6-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

Օրենսդիր և գործադիր մարմիններ

4111 հոդվածի «40000.0» թիվը փոխարինել «41000.0» թվով

4239 հոդվածի «500.0» թիվը փոխարինել «1000.0» թվով

4251 հոդվածի «800.0» թիվը փոխարինել «1300.0» թվով

5.1.1 Աղբահանում

4239 հոդվածի «646.0» թիվը փոխարինել «3666.0» թվթվ

11.1.2 համայնքների պահուստային ֆոնդ

4891 հոդվածի «4244.0» թիվը փոխարինել «5244.0» թվով

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No5

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Զովունի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողատարածքը օտարել աճուրդային կարգով՝

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գին /դրամ/	Սահմանափակումներ
1	Հողամաս	Կոտայքի մարզ գ. Զովունի 1 փողոց 201	07-029-0020-0107	1000	բնակավայրի	Այլ հողեր	2712000	չկան

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԶՈՎՈՒՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11)-րդ կետի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Զովունիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սմբատ Թորոսի Թորոսյանին իր դիմումի համաձայն ազատել աշխատանքից:

2.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած՝ Նելլի Հրաչյայի Մխիթարյանի թեկնածությանը՝ որպես «Զովունիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԱՆ ԱՐՄԵՆԱԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի հունվարի 9-ի N947-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Զովունի համայնքի բնակարանային հարցերի հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի արձանագրությունը և Արման Արմենակի Ստեփանյանի դիմումը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Բավարարել 2015 թվականի սեպտեմբերի 26-ին ծառայողական պարտականությունները կատարելիս 3-րդ խմբի հաշմանդամ դարձած Արման Արմենակի Ստեփանյանի դիմումը:
2. Խնդրել Համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հունվարի 9-ի N947-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի համաձայն փաստաթղթերն ուղարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան վերջնական ամփոփման և Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության կարիքավոր ընտանիքներին աջակցություն տրամադրող հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԻՎ 0026-0020 ԵՎ ԹԻՎ 0026-0044 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010 թվականի N186-Ն հրամանով հաստատված հրահանգի 2-րդ մասի 5-րդ կետի պահանջը, Կոտայքի մարզի Զովունի համայնքի էլեկտրոնային քարտեզում սխալմամբ «Անհայտ» քաղաքացիների փոխանցված թիվ 0026-0020 և թիվ 0026-0044 ծածկագրերի տակ գտնվող հողատարածքների անճշտությունը ուղղելու նպատակով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող թիվ 0026-0020 և թիվ 0026-0044 ծածկագրերի տակ գտնվող 0.07406հա մակերեսով բնակավայրային նշանակության հողատարածքը ճանաչել Զովունի համայնքի համայնքային սեփականություն:
2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում ճշտված հատակագծի հետ միասին համայնքի էլեկտրոնային քարտեզում համապատասխան ուղղում կատարելու համար:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆՈՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի պահանջներով ինչպես նաև հաշվի առնելով Նորիկ Մկրտչյանի դիմումը համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բնակիչ Նորիկ Մկրտչյանին տրամադրել դրամական օգնություն 80000 (ութանասուն հազար) դրամի չափով:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքապետարանում ձևավորել գնահատող հանձնաժողով հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝	Վրույր Սիմոնյան	համայնքի ղեկավար
Հանձնաժողովի անդամ՝	Սուրեն Բաղդասարյան	համայնքի ղեկավարի օգնական
	Ջանիբեկ Հայրապետյան	համայնքի ղեկավարի տեղակալ
	Արշակ Պետրոսյան	գլխավոր մասնագետ
	Կարեն Խաչատրյան	ավագանու անդամ
	Ազիզ Ավդալյան	ավագանու անդամ

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No11

ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետի պահանջներով՝
համայնքի ավագանին ***որոշում է.***

Ձևավորել բնական և տեխնածին աղետների հետևանքով համայնքի բնակիչներին պատճառված վնասների չափերն ուսումնասիրող և արձանագրող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝	Սիմոն Սիմոնյան	աշխատակազմի քարտուղար
Հանձնաժողովի անդամ՝	Սուրեն Բաղդասարյան	համայնքի ղեկավարի օգնական
	Արշակ Պետրոսյան	գլխավոր մասնագետ
	Գոռ Հայրապետյան	ավագանու անդամ
	Էմիլ Ավուշյան	ավագանու անդամ
	Արմեն Բարսեղյան	ավագանու անդամ

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի երիտասարդների հետ տարվող աշխատանքների պատասխանատու՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ջանիբեկ Հայրապետյանի առաջարկը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին, իր սեփական լիազորությունների իրականացման շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, կնքել պայմանագիր տրանսպորտային ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ, համայնքի բյուջեի միջոցների հաշվին, որպես սոցիալական աջակցություն՝ ուսանողությանը քաղաք Երևան տեղափոխելու համար:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՍՏԱԴԻՈՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՐԹԵՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱԼՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 6)-րդ կետի, 51-րդ հոդվածի 2-րդ մասի 2)-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է***.

Տալ համաձայնություն՝ համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված ստադիոնի և նրա հարակից տարածքում հողալցման աշխատանքներ կատարելու միջոցով հողի հարթեցում կատարելու և հողամասը բարեկարգելու համար:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2017 թվականի No14

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն և N912-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Ներսիսյանի դիմումը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1.Համայնքային հողամասում գտնվող 0020-0009 ծածկագրից 661.7քմ, 0020-0032 ծածկագրից 216.3քմ և 24.5քմ բնակավայրային այլ հողերի վրա ինքնակամ զավթած և ինքնակամ կառուցապատված հողատարածքները և կառույցները համարել համայնքի սեփականություն և դիմել անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում պետական գրանցում կատարելու համար:

2. Պետական գրանցում ստանալուց հետո նշված հողատարածքները և կառույցները օրենքով սահմանված կարգով վաճառել քաղաքացի Սամվել Ներսիսյանին:

Կողմ 9 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ